

**ՍՈՒՐԵՆ ՔՐՄՈՅԱՆ**

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ,  
իրավաբանական գիտությունների թեկնածու

**ՇՈՒՇԱՆԻԿ ԳՈՒԿԱՍՅԱՆ**

ՀՀ արդարադատության նախարարության  
աշխատակազմի քրեակատարողական  
քաղաքականության մշակման բաժնի պետ,  
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի  
քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

**ՊԱՏԻԺՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ  
ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ  
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ ԴԱՏԱՐԱՆ ԲԵՐՎՈՂ  
ԲՈՂՈՔՆԵՐԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ  
ՀՀ ՕՐԵՆՍԳՐՈՒԹՅԱՄԲ**

ՀՀ օրենսդրությամբ դատապարտյալներն օժտված են պատիժները կատարող մարմինների և հիմնարկների պաշտոնատար անձանց որոշումների դեմ դատարան բողոք ներկայացնելու իրավունքով: ՀՀ օրենսդրության վերլուծությունը վկայում է, որ բացակայում է առանձնահատուկ իրավական կարգավորումը պատիժները կատարող մարմինների և հիմնարկների պաշտոնատար անձանց որոշումների դեմ ներկայացվող բողոքների քննության վերաբերյալ: Բացի դրանից, դատարան ներկայացվող բողոքների ընդդատության հարցը հստակ չէ: ՀՀ վարչական դատարանին և ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա հարցերի վերլուծությունը վկայում է, որ նման բողոքները պետք է քննվեն ընդհանուր իրավասության դատարանի կողմից:

*Հիմնաբառեր- պատիժը կատարող մարմիններ, քրեակատարողական հիմնարկներ, դատապարտյալների բողոքներ, դատարանի իրավասություն, բողոքարկման մեխանիզմ, կարգավորման գործընթաց:*

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածում ամրագրված են դատապարտյալի հիմնական իրավունքները: Ի թիվս դատապարտյալի իրավունքների՝ օրենսդիրը ամրագրում է իր իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ բողոքներով համապատասխան մարմիններին դիմելը:

Հարկ է նշել, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 7-րդ հոդվածը, ամրագրելով օրինականության սկզբունքը, հստակ շեշտադրում է, որ պատիժները կատարող մարմինների և հիմնարկների պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն օրենքով իրենց վերապահված գործողություններ, իսկ պաշտոնատար անձանց գործողությունների կատարումը կարող է բողոքարկվել դատարան կամ օրենքով նախատեսված այլ մարմին: ՀՀ օրենսդրության վերլուծությունը վկայում է, որ հստակեցված չեն պատիժը կատարող մարմինների որոշումների դեմ ներկայացվող բողոքների ընդդատության հետ կապված հարցերը: Ուստի հարկ է պարզաբանել, թե արդյոք այդ բողոքները ընդդատյա են ընդհանուր իրավասության դատարանին, թե

ՀՀ վարչական դատարանին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ գլխով կարգավորվում են գործերի առարկայական ընդդատության հետ կապված հարցերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն.

«1. Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը:

2. Վարչական դատարանին ընդդատյա չեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի (այսուհետ՝ սահմանադրական դատարան) ենթակայությանը վերապահված գործերը, ընդհանուր իրավասության դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, ինչպես նաև պատժի կատարման հետ կապված գործերը»:

ՀՀ դատական օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«Ընդհանուր իրավասության դատարանին են ենթակա բոլոր գործերը, բացառությամբ վարչական դատարանի ենթակայությանը վերապահված

գործերի»:

Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ

1. Վարչական դատարանի առարկայական ընդդատությանն է վերապահված հանրային իրավահարաբերություններից ծագող գործերի քննությունը և լուծումը,

2. Ընդհանուր իրավասության դատարանին ենթակա են բոլոր գործերը՝ բացառությամբ վարչական դատարանի ենթակայությանը վերապահված գործերի,

3. Ընդհանուր իրավասության դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, ինչպես նաև պատժի կատարման հետ կապված գործերը ՀՀ վարչական դատարանին ընդդատյա չեն:

Այս առումով քննարկման առարկա պետք է դարձնել հետևյալ հարցերը՝

1. Ո՞ր հարաբերություններն են իրենց բնույթով համարվում հանրային իրավահարաբերություններ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենսդրությամբ չի նախատեսվում այդ հարաբերությունների սպառիչ ցանկը (ինչը անհնար է գործնականում նախատեսել, օրենսդրությամբ առանձնացվում են ընդամենը հանրային իրավահարաբերություններից ծագող որոշ գործեր),

2. Արդյո՞ք հարաբերության՝ հանրային-իրավական բնույթ ունենալու հանգամանքը հիմք է հադիսանում այն վարչական դատարանի առարկայական ընդդատությանը վերապահելու համար:

Վերը նշված հարցադրումների պարզաբանման համար էական նշանակություն կարող են ունենալ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ համապատասխան գործերով արտահայտած դիրքորոշումները:

ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ ԵԱԸԳ-1369/02/09 գործով արտահայտած իրավական դիրքորոշման համաձայն.

«Հանրային իրավունքի բնագավառը նշանակում է անձի հարաբերություններ պետության հետ, որը հանդես է գալիս որպես հանրային իշխանության կրող:

Հանրային իրավահարաբերություններն այն հարաբերություններն են, որոնք ծագում են պետական կառավարման մարմինների գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագած հարաբերություններում»:

Սեկ այլ՝ թիվ ՇԳ-2/0007/15/12 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.09.2013 թվականին արտահայտած դիրքորոշման համաձայն.

«Պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասնավոր մեղմ պատժով փոխարինելու հետ կապված իրավահարաբերություններն իրենց բնույթով քրեաիրավական են, հետևաբար ենթակա են լուծման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատապարտյալի պատիժը կրելու վայրի դատարանի կողմից:

Ընդ որում, չնայած այն հանգամանքին, որ այս դեպքում մասնավոր անձը (դատապարտյալը) վիճարկում է վարչական մարմնի՝ իր շահերին առնչվող որոշման կամ գործողության օրինականությունն ու հիմնավորվածությունը, այդուհանդերձ, տվյալ վեճը չի կարող համարվել հանրային իրավահարաբերություններից բխող այնպիսի վեճ, որի լուծումն ընդդատյա է վարչական դատարանին:

Քրեաիրավական հարաբերությունները նույնպես հանրային իրավահարաբերությունների տեսակ են, սակայն այս դեպքում շահագրգիռ անձի բողոքի քննարկման և լուծման իրավասությունն օրենսդրորեն վերապահված է ընդհանուր իրավասության (քրեական) դատարանին և դուրս է վարչական դատարանի իրավասության շրջանակներից»<sup>2</sup>:

ՀՀ վճռաբեկ դատարանի՝ վերը նշված որոշումների համակարգային վերլուծությունից բխում է՝

1. Քրեաիրավական հարաբերությունները հանդիսանում են հանրային իրավահարաբերությունների տարատեսակ,

2. Իրավահարաբերությունների՝ քրեաիրավական բնույթ ունենալու կամ այդպիսին չունենալու հանգամանքից կախված՝ որոշվում է այդ հարաբերություններից բխող և դրանց հետ կապված հարցերի նկատմամբ օրենսդրության համապատասխան նորմերի կիրառման հարցը,

3. Քրեաիրավական հարաբերությունների և համապատասխանաբար այդ հարաբերություններից բխող գործողությունների, որոշումների, անգործության հետ կապված հարցերը ենթակա են քննության և լուծման քրեաիրավական նորմերի կիրառմամբ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նման հարցերի լուծման իրավասությունը վերապահված է ընդհանուր իրավասության դատարանին:

Այսինքն՝ համապատասխան հարաբերության հանրային-իրավական բնույթ ունենալու հանգամանքը չի հանդիսանում դեռևս հիմք այդ հարաբերություններից բխող հարցերի լուծումը ՀՀ վարչական դատարանի ընդդատյանը վերապահելու

համար (անգամ այն պարագայում, երբ համապատասխան որոշումը կայացվել, գործողությունը կամ անգործությունը դրսևորվել է վարչական մարմնի կողմից), և նման հարաբերության քրեաիրավական բնույթ ունենալու, քրեաիրավական ինստիտուտների հետ առնչություն ունենալու հանգամանքը վկայում է այն մասին, որ դրանք պետք է լուծվեն քրեաիրավական նորմերի կիրառմամբ՝ ընդհանուր իրավասության դատարանի կողմից:

Այժմ անդրադառնանք քրեակատարողական հիմնարկի պետի կողմից կայացվող որոշումների տեսակների հետ կապված հարցի պարզաբանմանը:

«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով կարգավորվում է քրեակատարողական հիմնարկի ղեկավարի իրավասության հետ կապված հարցերը, մինչդեռ այս հոդվածում անդրադարձ չի կատարվում քրեակատարողական հիմնարկի պետի կողմից կայացվող որոշումների հետ կապված հարցերին:

Քրեակատարողական հիմնարկի պետի իրավասությունների և դրանցից բխող որոշումների հետ կապված հարցերի պարզաբանման համար կարևոր նշանակություն ունի ՀՀ կառավարության՝ 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշումը, որով հաստատվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը: Վերը նշված որոշման և ՀՀ քրեակատարողական օրենսգրքի վերլուծությունից կարելի է հանգել այն եզրակացության, որ քրեակատարողական հիմնարկի պետի կողմից կայացվող որոշումները բաժանվում են 2 հիմնական տեսակների՝

1. Որոշումներ, որոնք ուղղակիորեն առնչվում են կամ կարող են առնչվել պատժի կատարման հետ,

2. Որոշումներ, որոնք անուղղակիորեն առնչվում են կամ կարող են առնչվել պատժի կատարման հետ:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ նախկին խմբագրությամբ գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի ընդդատության հարցերին վերաբերող 8-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրված էր հետևյալ խմբագրությամբ՝

«2. Վարչական դատարանին ընդդատյա չեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի ենթակայությանը վերապահված գործերը, քրեական վարույթի ընթացքում ծագող իրավահարաբերություններից բխող գործերը, ընդ-

հանուր իրավասության կամ քրեական դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, սնանկության վարույթում ծագող իրավահարաբերություններից բխող գործերը»:

ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՇԳ-2/0007/15/12 գործով արտահայտած դիրքորոշման հաշվառմամբ և պատժի կատարման հետ առնչվող հարցերի ընդդատության խնդրի լուծման նպատակով գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում (ընդունվել է 05.12.2013 թվականին) կատարվեց փոփոխություն, և ընդդատությանը վերաբերող դրույթը շարադրվեց հետևյալ խմբագրությամբ.

Մասնավորապես՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

«Վարչական դատարանին ընդդատյա չեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի (այսուհետ՝ սահմանադրական դատարան) ենթակայությանը վերապահված գործերը, ընդհանուր իրավասության դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, ինչպես նաև պատժի կատարման հետ կապված գործերը»:

Այսինքն՝ կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում հատուկ նախատեսվեց, որ պատժի կատարման հետ կապված հարցերը չեն կարող ընդդատյա լինել ՀՀ վարչական դատարանին:

Հարկ է նշել, որ միջազգային փորձի վերլուծությունը վկայում է այն մասին, որ առկա են երկրներ, որտեղ պատժի կատարման հետ կապված որոշումները բողոքարկվում են ընդհանուր իրավասության դատարան կամ այդ նպատակով հատուկ ստեղծված դատարան: Օրինակ, Գերմանիայում քրեակատարողական հիմնարկի պետի որոշումների բողոքարկման հետ կապված հարցերը կարգավորվում են Քրեակատարողական օրենսգրքով (108-121-րդ հոդվածներ): Ազատագրկման կատարման ոլորտում անհատական հարցեր կարգավորող որոշումները (գործողություն, անգործություն) կարող են վիճարկվել դատարանում (Քրեակատարողական պալատ) միաժամանակ պահանջելով պարտավորեցնել ընդունել համապատասխան որոշումը կամ կատարել գործողությունը, որը մերժվել է կամ չի կատարվել, եթե դիմողը պնդում է, որ իր իրավունքները խախտվել են:

Երկրամասային օրենքով կարող է սահմանվել, որ դատարան կարելի է դիմել միայն վարչական վարույթից հետո: Դիմումը ներկայացվում է այն Քրեակատարողական պալատ, որի տարածքում գտնվում է համապատասխան քրեակատարող-

դական հիմնարկը:

Դատարան ներկայացվող դիմումը չունի որևէ կասեցնող ազդեցություն: Բայց դատարանը կարող է կասեցնել վիճարկվող որոշման կամ գործողության կատարումը, եթե այն կարող է դիմողի իրավունքի իրականացմանը խոչընդոտել, և եթե չկան հասապատեման գերակա շահ: Դատարանը կարող է նաև ժամանակավոր կարգադրություն արձակել: Նշված որոշումները բողոքարկման ենթակա չեն. դրանք կարող են վերացվել կամ փոփոխվել դատարանի կողմից ցանկացած ժամանակ: Դատարանը դիմումի վերաբերյալ որոշում է կայացնում առանց լսումների, կարգադրության ձևով:

Քրեակատարողական պալատի որոշումը կարող է բողոքարկվել ռեզիոնալ դատարանի քրեական բաժին, որը կարող է նոր որոշում կայացնել կամ ուղարկել գործը Քրեակատարողական պալատ՝ նոր քննության: Քրեական բաժնի որոշումը վերջնական է<sup>3</sup>:

Ինչպես երևում է, Գերմանիայում նմանատիպ հարցերի լուծումը վերապահված չէ վարչական դատարանին, այլ վերապահված է Քրեակատարողական պալատին, և նախատեսվում է նաև վերադատության կարգով համապատասխան որոշումների բողոքարկման ինստիտուտ:

Իռլանդիայում ևս դատապարտվածները օժտված են պատիժը կատարող մարմինների և որոշումների դեմ բողոքներ ներկայացնելու իրավունքով: Բողոքարկման մեխանիզմը կարգավորված է Իռլանդիայի Բանտային կանոնների (2007 թվական) 55-57-րդ կանոններով: Սակայն հարկ է նշել, որ բողոքարկման մեխանիզմին առնչվող ակտերը իրենց իրավական կարգավորումը չեն ստացել վերը նշված ակտում<sup>4</sup>:

Հաշվի առնելով ՀՀ օրենսդրությամբ նախատեսված իրավակարգավորումները և պատժի կրման հետ կապված հարցերի առանձնահատկությունները՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ նմանատիպ հարցերի քննարկման և լուծման իրավասությունը պետք է վերապահել ընդհանուր իրավասության (քրեական) դատարանին, քանի որ ՀՀ-ում վարչական դատավարության մոդելն ինքնին բացառում է պատժի կատարման հետ կապված հարցերը վարչական դատարանի ընդդատությանը հանձնելու հնարավորությունը:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2010 թվականի ԵԱԲԳ/1369/02/09 գործով արտահայտած իրավական դիրքորոշումը., ՀՀՊՏ 2011.01.27/4(807).1

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 13.09.2013 թվականի ՇԳ-2/0007/15/12 գործով արտահայտած իրավական դիրքորոշումը., ՀՀՊՏ 2014.01.29/4(1017):

<sup>3</sup> [http://www.gesetze-im-internet.de/englisch\\_stpo/englisch\\_stpo.html#p2522](http://www.gesetze-im-internet.de/englisch_stpo/englisch_stpo.html#p2522)

<sup>4</sup> Reilly Michael, Guidance on Best Practice relating to Prisoners' Complaints and Prison Discipline, 10 September 2010

Сурен Крмоян

Заместитель министра юстиции Республики Армения,  
кандидат юридических наук

Шушаник Гукасян

Начальник отдела развития пенитенциарной  
политики Министерства Юстиции РА,  
Аспирант кафедры гражданского права  
юридического факультета ЕГУ

## РЕЗЮМЕ

*Вопрос о юрисдикции жалоб переданных в суд против решений  
пенитенциарных органов и учреждений*

Осужденные имеют право подавать жалобы на решения должностных лиц уголовно-исполнительных органов и учреждений. Анализ законодательства Республики Армения показывает, что не существует специального регулирования механизма подачи жалоб на решения, принятые должностными лицами пенитенциарных учреждений. Кроме того, вопрос о юрисдикции жалоб переданных в суд не регулируется и не является точным. Анализ юрисдикции Административного суда и суда Первой Инстанции дает возможность прийти к заключению, что такие жалобы должны быть рассмотрены в суде первой инстанции.

**Ключевые слова:** пенитенциарные органы, исправительные учреждения, жалобы осужденных, юрисдикция суда, механизм жалоб, процесс регулирования

Suren Krmoyan

Deputy Minister of Justice of the Republic of Armenia,  
Candidate of legal sciences

Shushanik Ghukasyan

Head of the division of Penitentiary Policy  
Development of the Ministry of Justice of RA,  
PhD student of the Chair of Civil Law of the  
Faculty of Law of the Yerevan State University

## SUMMARY

*The issue of jurisdiction of complaints brought to court against the decisions  
of penitentiary bodies and institutions*

The convicted persons have right to bring complaints against the decisions of the officials of penitentiary bodies and institutions. The analyses of the legislation of the Republic of Armenia shows that there is no special regulation about the complain mechanism of the decisions made by officials of penitentiary institutions. Besides, the issue of the jurisdiction of appeals brought to court is not regulated and is not precise. The analyses of the jurisdiction of Administrative court and the Court of First Instance gives opportunity to conclude that such appeals should be considered in the Court of First Instance.

**Keywords:** Penitentiary bodies, penitentiary institutions, complains of convicted persons, jurisdiction of court, complain mechanism, regulation process.